

3059

172
N-78

9. N.
4. D. C.



001

001 - 001

XVI, m

100

103-140.

100
103-140.

vx

2004

2033 - WR

2029 2050

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԶԲՕՍԱԼԻ

Տ Ե Տ Ր Ը Կ Ն Ե Ր

Ը.

uv

Խ Օ Ս Ք

Վ Ա Ս Ն

Հ Ա Յ Ր Ե Ն Ա Ս Ի Ր Ո Ւ Թ Ե Ա Ն

1004
1880
1881

Գ Ր Ե Ա Յ Հ . * * Ի Մ Խ Ի Թ . Ո Ւ Խ Տ Է

Հ Ա Ն Ե Ա Լ Յ Ե Ի Ր Պ Ա Լ Ր Ա Գ Ր Ո Յ Ն



Ի Վ Լ Ի Ե Ն Ե

Ի Վ Ա Ն Ս Պ Ա Շ Տ Պ . Ս . Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Ծ Ն Ի

1849 . Ռ Մ Ղ Ը

08+17

Հ Ա Յ Ր



Ար տարակուսինք որ մեկը առանց Հայրենասիրութեան մի միայն ճշմարիտ առաքինութիւն, մի միայն ստոյգ քանքար կարենայ ունենալ:

Հարստութիւն, Ոգի Գրեւորութիւն.
Գեղեցիկ Ե. ԳԼ. ԺԻ.

Գեղեցիկ են մարդուն ան ամէն զգածմունքները, որոնք թէ ընդհանրապէս բոլոր մարդկութիւնը եւ թէ մասնաւորապէս որոշեալ մարդիկ իրարու հետ կապելով, զիրենք՝ աղէկ ըլլալու, բարիք գործելու ու իրենց նմաններուն օգնելու կ'առաջնորդեն: Ազնուական են բնութեան մէջ անկուած ան ամէն բերմունքները, որոնք կրթութենէն՝ օգնութիւն ու կրօնքէն լուսաւորութիւն գտնելով, զմեզ աղէկ քաղաքացի, ընկերութեան կամ ազգի օգտակար ու գործունեայ անդամ կ'ընեն: Յանկալի են ան ամէն քաղաքական առաքինութիւնները, որոնք մարդու՝ իր քաղաքակիցներուն կամ Հայրենակիցներուն յառաջադիմութեան, պայծառութեան, երջանկութեան նպաստաւոր ըլլալու կ'օգնեն:

Իսկ այս աս դեղեցիկ զգածմանց, աս ազնուական բերմանց, աս ցանկալի առաքինութեանց մէջ չկայ մեկը որ այնպէս ամէն մարդու պատշաճ, ամէն ժամանակ օգտակար, ամէն տեղ հարկաւոր ըլլայ, ինչպէս Հայրենասիրութիւնը: Հայրենասիրութիւնը թէ

Հարստին եւ թէ աղքատին, թէ ուսումնականին եւ թէ արուեստաւորին, թէ մեծին ու իշխանին եւ թէ պղտիկին ու հպատակին կը պատշաճի: Հայրենասիրութիւնը թէ երջանկութեան ու թէ թշուառութեան ատեն, թէ պատերազմի եւ թէ խաղաղութեան ժամանակ օգտակար է: Հայրենասիրութիւնը թէ Այրարատայ ամենածաղիկ դաշտերուն եւ թէ Սահարայի ամայի անապատներուն վրայ, թէ Լափոնացւոյն գետնափոր բնակարանին եւ թէ թագաւորաց ոսկիապատ ու մարմարիոնեայ պալատներուն մէջ հարկաւոր է:

Սակայն ո՞վ արդեօք արժանի է աս գեղեցիկ ու ազնուական անունը վրան կրելու, ինչպիսի՞ մարդու կը պատշաճի Հայրենասէր անունը, ո՞վ է ճշմարիտ Հայրենասէր: — Հայրենասէր ան մարդն է, որն որ իր հայրենեացը կամ աւելի աղէկ ըսելու համար՝ իր հայրենակիցներուն վրայ մէկ մասնաւոր կերպով ներքին յօժարութիւն ու բերում մը ունի: Իրեն փառք ու պատիւ կը համարի նոյն ազգէն ու ժողովրդէն ըլլալը. հայրենեաց պատիւը ուրիշներուն առջեւը պահելու կը ջանայ. կը զգուշանայ մեծապէս որ աղգին՝ նախատանաց առիթ մը չտրուի: Հայրենեաց կամ հայրենակիցներուն վրայ ունեցած սէրը՝ ամէն առթի մէջ խօսքով ու աւելի եւս գործքով կը յայտնէ. հայրենեաց պայծառանալուն, ծաղկելուն, երջանիկ ըլլալուն հոգ կը տանի ու գործակից կ'ըլլայ: Չէ թէ միայն երջանկութեան ատեն, հապա նաեւ թշուառութեան ժամանակ իր հայրենակիցներէն չբաժնուիր: Հայրենեաց վիշտ հասցընողներուն ու անիրաւութիւն ընողներուն՝ ձեռքէն եկածին չափ դէմ կը դնէ. հայրենեաց մէջ պատահելու շարիքներուն առջեւն առնելու, պատահածներուն դարման տանելու ետեւէ կ'իյնայ: Հայրենեաց համար ամենեւին աշխատանք մը, կորուստ մը, զոհ մը աչքին չերեւար: Աւե-

լի եւս բացայայտ խօսելու համար՝ Հայրենասէր ան մարդն է որն սր հայրենիքն ու ազգը՝ իր տանն ու ընտանեացը պէս կը համարի. ու իր ազգին բարիքն այնպէս կը փնտռէ, ինչպէս իր զաւկրներուն բարիքը: Իր տանը պատիւը պահելու ու համբաւն երեւելի ընելու համար աշխատած ինչափ իր հայրենակիցները պատուաւոր, համբաւաւոր ընելու կը զբաղի: Ինչպէս որ իր տանը վրայ վտանգ մը հասած ատեն՝ փոյթն ու մտազրուծիւնը կը զարթնու, նոյնպէս ալ հայրենիքը վտանգի մէջ տեսած ատեն՝ ամէն ջանքն ու ճիգը ի գործ կը դնէ: Հայրենասէրը աս ընդհանրապէս բոլոր իր հայրենակիցներուն, բովանդակ իր ազգին մէկտեղ ըրածները՝ համեմատութեամբ անոնցմէ ամէն մէկուն ալ կ'ընէ. ուստի եւ ամէն մէկ իր հայրենակցին աղէկութեան, յառաջադիմութեան կ'օգնէ, զինքը կարօտութեան մէջ տեսած ատեն՝ օգնութեան կը հասնի, նեղութիւն հասցընողներուն դէմ կը պաշտպանէ, վշտերու ատեն կը մխիթարէ: Մէկ խօսքով ըսենք՝ եղբայրսիրութեան պահանջածը՝ մասնաւոր կերպով մը իր հայրենակիցներուն վրայ կը կատարէ:

Հայրենասէր մարդուն յատուկ եղած աս ամէն չքնաղ ու ցանկալի գործքերը, Հայրենասիրութեան յառաջ բերած աս ամէն բարիքները տեսնելէն ետեւ՝ ո՞վ կրնայ չաղաղակել. Ո՛հ, գեղեցիկ առաքինութիւն, ազնուական հուր, սքանչելի սէր. երանի՛ ազգին՝ որուն անդամները աս գեղեցիկ կապով իրարու հետ կապուած են, երանի՛ ժողովրդեան՝ որուն որդւոցը սրտին մէջ աս ազնուական հուրը վառուած է, երանի՛ աշխարհին՝ որուն բնակիչներուն մէջ աս չքնաղ առաքինութիւնը կը տիրէ: — Սակայն Հայրենասիրութեան վրայ աս զարմանքն ունենալէն վերջը՝ հարկաւ ամէն մարդուն մտքին մէջ աս երկու խնդիրը կը ծնանի. նախ՝ թէ երեւակայական բան մըն է արդեօք, թէ՛ կարելի բան մը եւ իրօք եղած

են ու կան մարդիկ՝ որ ունենան . երկրորդ՝ ամէն առանձնական մարդուն վրայ ինչ պարագ կը դնէ, կամ թէ Հայրենասիրութիւնն ի գործ դնել, Հայրենասեր ըլլալ ուզող՝ ինչ պիտ'որ ընէ, եւ իր Հայրենասիրութիւնը զլսաւորաբար ինչ բանի մէջ պիտի ցուցնէ: — Աս երկու խնդրոյն լուծումը պիտ'որ ըլլայ առջեւի խօսակցութիւննիս:

Ա.

Հայրենասիրութիւնը երեւոյթացաբար բան զի է, հազա խաբէլե առաքինութիւն զի, եւ եղած էն որ իսկ մարդիկ որ իրօք սանին:

1. Հայրենասիրութեան զգածմունքը մարդուն այնպէս բնական է, որ չենք սխալիր թէ որ ըսելու ըլլանք որ ամէն մարդ աշխարհը եկած ատեն մէկտեղ կը բերէ: Աս զգածմունքը ոչ Հայրենեաց գեղեցկութենէն ու զուարճակութենէն, մատակարարած դիւրութենէն ու հոն վայելուած քաղցրութենէն, ոչ Հայրենակիցներուն բարի, առաքինի ու ազնուաբարոյ ըլլալէն. ոչ ազգին հօր, իմաստուն, պատուաւոր ըլլալէն կախում ունի: Ամէն օրուան փորձը մեզի ասոր անհակառակելի ցոյցը կու տայ: Իսլանտացին իր սառուցեալ լճերուն քով, Ափրիկեցին իր կրակ կտրած աւազին վրայ աւելի սիրով ու հաճութեամբ կը բնակի, քան թէ քաղցրախառն ու հովասուն դաշտերու եւ գեղեցիկ բլուրներու վրայ: Այրենի մը իր փրկուկած ողորմելի խրճիթին կամ մլսով մրճոտած գետնափոր սյրին մէջ աւելի քաղցրութիւն կը զգայ, քան թէ հոյսկապ քաղաքներու զարդարուն ու փառաւոր ապարանքներուն մէջ: Գնա Ամերիկայի ամենէն ողորմելի ու վայրենի ցեղէն մարդու մը՝ քու երկրիդ գեղեցկութիւնն ու ազնուութիւնը, քու ազգիդ մեծութիւնն, արիութիւնն, առաքինութիւնները, քաջագործութիւնները մէկիկ մէկիկ պատմէ. քու հայրենակիցներուդ բարի բարի բնաւորութիւնները, ընկերներնուն երջանկութեան համար ըրած բարերարու-

Թիւնն առջեւը դիր, նայէ քու սաստիկ ճարտարաբանութեամբդ ու զօրաւոր փաստերովդ կրնաս զինքը համոզել որ քու հայրենիքդ իր հայրենիքէն աղէկ, քու ազգդ իր ազգէն վեր համարի: Եւ ոչ ալ կրնայ ըմբռնել որ իր հայրենիքէն աւելի գեղեցիկ երկիր մը, իր ցեղէն աւելի զօրաւոր ու աւելի երջանիկ ազգ մը կարող ըլլայ գտնուիլ:

Թէ որ այսպիսի մէկը ըստ պատահման իր հայրենիքէն դուրս ելլէ, Թէպէտ եւ գացած երկիրը իր ծնրնդեան տեղէն հազարապատիկ աղէկ ըլլայ, Թէպէտ եւ նոյն տեղը տեսակ տեսակ դիւրութիւններ ու վայելմունքներ ունենայ, օրը չըտեսներ որ նորէն իր բնիկ երկիրը դառնայ: Ամէն օր, ամէն ժամ, ամէն ըսպէ իր հայրենիքը կը յիշէ. ջինջ ու պայծառ երկինքին տակ՝ իր մշտնջենաւոր ամպերով ու մշուշով պատած երկինքը կը փնտռէ, կարկաջասահ առուակի քով, քաղցրախօս Թռչուններու մէջ՝ իր ահագին հոսանքները, իր ամայի անապատներուն գազաններուն մռնչիւնը կը խնդրէ. քաղցր երաժշտութիւններու, զարմանալի տեսարաններու մէջ՝ իր ցեղին վայրենի սրնգին, անձուռնի պարերուն կը փափաքի:

Աւելի զարմանալին ան է որ կարծես Թէ մարդը որչափ որ հայրենիքէն աւելի հեռու կը գտնուի, այնչափ ալ հայրենեաց սէրն ու անձուկը օրտին մէջ աւելի կը սաստկանայ: Մարդը իրօք հայրենիքը դառնալ չկրցած ատեն՝ գէթ ինքը զինքը երեւակայութեամբ խաբելու կը ջանայ: Ամէն տեսած բաները, ամէն ըսած խօսքերը՝ իրեն իր քաղցր հայրենիքը յիշել կուտան: Շատ անգամ չնչին առարկայ մը, բլրակ մը, դաշտ մը, պարտէզ մը, առուակ մը, հովուական սրինգ մը, ոչխարի մը մայելը, Թռչնոյ մը երգը՝ զինքը մտօք իր ծնրնդեան երկիրը կը փոխադրէ: Օտար երկրի մէջ կարծես Թէ բովանդակ բնութիւնը իր զօրութիւնը կորսնցուցած է, եւ իբրեւ Թէ իրական բան

մ) ըլլալէն դադրելով՝ մարդուս հայրենեացը ստուերը կը դառնայ, հայրենեացը պատկերը կ'ըլլայ: Ասոր համար է միանգամայն որ ամէն իր հայրենիքէն եկած նաեւ փոքր ու շնչին բաներն ալ օտար երկրի մէջ աչքին առջեւը մեծ ու յարդի բան մը կ'երեւայ: Իր երկրէն բերուած մեռած թռչուն մը, չորցուցած տունկ մը, ձեռագիր մը՝ սիրան ուրախութեամբ կը լեցընէ, պանդխտութեան տրամութիւնը քիչ մը ատեն մոռնալ կու սայ: Ասոր համար է դարձեալ որ հայրենիքէն ու հայրենակիցներէն հեռու տեղ մը բնակողին իր հայրենակիցներէն մէկը տեսնելը՝ արտաքոյ կարգի մեծ ուրախութիւն կը պատճառէ: Պանդխտութեան մէջ երկու ազգակիցներու առաջին տեսութիւնը, մայրենի լեզուաւ խօսուած երկու խօսք՝ մէջերնին մեծ բարեկամութիւն ու մտերմութիւն հաստատելու բաւական կ'ըլլայ: Աս օտար երկրի մէջ ազգայնոյ մը տեսութենէն ծագած ուրախութիւնը՝ երկայն ժամանակ հայրենիքէն հեռու մնացողէն ուրիշ մարդ չըկրնար ազէկ մը իմանալ:

Պարձեալ որչափ որ մարդը իր հայրենիքէն հեռու բռնող արգելքը մեծ է, կարծես թէ Հայրենասիրութիւնը այնչափ աւելի կը սաստկանայ. ուստի եւ աքսորուած մարդէ մը աւելի հայրենեաց անձուկ ու սէր ունեցող դժուարաւ կրնայ գտնուիլ: Միայն թէ արտաքոյ կարգի դիպուած մը, սաստիկ սէր մը ղինքը իր աքսորանաց երկրին հետ չկապէ, կամ թէ իր սաստիկ կիրքերը հոնտեղը իրենց նորանոր ճարակ մը չգտնեն, հայրենեաց ու հայրենակիցներուն անձուկէն ու կարօտէն կը մաշի: Շատ անգամ աս կարօտն ու անձուկը առանց ուրիշ պատճառի մը մարդուն վրայ մահացու հիւանդութիւն մը կը բերէ, որն որ Հայրենեաց հիւանդութիւն կ'անուանուի, եւ ասոր՝ նորէն հայրենիքը դառնալէն ուրիշ դեղ չըկրնար գտնուիլ: Ուստի եւ շատերը օտար երկրի մէջ իրենց Հայրենա-

սիրութեան զոհ եղած, կեանքերնին կորսընցուցած են:

Աս ամէն երեւոյթները ի՞նչ բանով կրնանք մեկնել: Վայրենի ու ամենեւին կրթութիւն չունեցող մարդուն սով սորվեցուցած է որ ամէն մարդ իր հայրենիքն ու հայրենակիցները սիրելու պարտականութիւն ունի, սով զինքը կրթած է որ աս սէրէն ծագած պարտքերը կատարէ. այսպիսի ընդհանուր զգածման պատճառ սով կրնայ ըլլալ, բայց եթէ բնութիւնը բնութիւնը ամենուն սրտին մէջ հայրենեաց համար այնպիսի սէր մը վառած է, որ ամենեւին բան մը չըկրնար մարել. կամ թէ Շաղոպիանին խօսքը գործածելու համար՝ Նախախնամութիւնը ամէն մարդուն ոտուրները իր ծնընդեան երկրին հետ այնպիսի մագնիսով մը կապած է, որն որ անյաղթելի է: Ինչպէս որ մարդը բնութեամբ իր կենացը պահպանութեան ետեւէն կ'իյնայ. ինչպէս որ ամէն ծնողք բնութեամբ զաւերներնին կը սիրեն . . . նոյնպէս ալ ամէն մարդ բնութեամբ իր հայրենեացը, իր հայրենակիցներուն ծածուկ յօժարութիւն մը, ներքին բերում մը կ'ունենայ: Անոր համար ինչպէս որ անձնասպանը բնութեան հրէշ մը կը համարուի, ինչպէս որ իր զաւերները չսիրողը բնութեան հրէշ մըն է . . . նոյնպէս ալ իր հայրենիքը չսիրողը, հայրենակիցներուն վրայ դուրս ու յօժարութիւն չունեցողը՝ բնութեան հրէշ մըն է: Եւ դարձեալ ինչպէս որ միայն գաղանային ու ահագին կիրք մը կրնայ ծնողաց սրտէն որդւոց սէրը հանել. նոյնպէս ալ մարդու մը սրտին մէջէն աս բնածին Հայրենասիրութիւնը հանելու համար՝ բնութեան դէմ ահագին ու հրէշական կիրք մը հարկաւոր է: Չեմ խօսիր հայրենեաց ատելութիւն ունենալու, ազգատեաց ըլլալու վրայ. վասն զի թէ մէկ կողմանէ անկարելի կը համարիմ որ այսպիսի հրէշ մը կարենայ գտնուիլ, եւ թէ մէկալ կողմանէ չեմ

կրնար բաւական զգուեղի անուն մը գտնել այսպիսի զարհուրելի մնութիւն մը, ասանկ այլանդակ դազան մը բացատրելու. եւ ոչ ալ բնութեան հրէշ ըսելով՝ այսպիսիներուն վրայ ճիշդ դաղափար կրնայ տրուիլ :

2. Մինչեւ հիմա ըսածնիս բաւական կը համարինք Հայրենասիրութեան՝ ամէն մարդու նաեւ վայրենիներու ալ բնական կամ ընտաբոյս ըլլալը ցուցնելու համար : — Ասկից ամէն մարդ ինք իրմէ կրնայ մտկաբերել որ եթէ առանց ուսման ու կրթութեան ալ (բաւական որ բնութիւնը արտաքին պատճառներով խանգարուած չըլլայ) այսչափ տարածեալ ու զօրաւոր է Հայրենասիրութիւնը, պէտք է որ աւելի եւս սասականայ ու գործունեայ ըլլայ, թէ որ կրթութիւնն ալ՝ բնութեան օգնութիւն հասնելով պատճառներով ալ աս սիրոյն որչափ պատշաճ, որչափ օգտակար, որչափ հարկաւոր ըլլալը ցուցնէ : Ամէն մարդ կրնայ իմանալ որ եթէ վայրենին ալ ամէն դիւրութենէ ու քաղցրութենէ զուրկ հայրենիքը, բիրտ ու կոշտ հայրենակիցները կը սիրէ, պէտք է որ կրթուած անձ մը իր դեղեցիկ ու երկնից առատ ձիրքերովը զարդարուած հայրենիքը, եւ իմաստուն, մեծանձն ու հզօր հայրենակիցները շատ աւելի սիրէ :

Այլ իրօք ալ այսպէս է : Երկայն ժամանակ պատմութեան մէջ թարթափած ըլլալ հարկաւոր չէ տեսնելու համար որ թէ հին ու թէ՛ նոր կրթուած ու քաղաքականացեալ ազգերու մէջ Հայրենասիրութիւնը ինչպէս սովորական բան մըն է, եւ ինչպիսի մեծամեծ դիւցազունքներ յարուցած, ինչպիսի մեծագործութիւններ ընել տուած է : Ղուկիանոսին ըսածին պէս՝ կրթեալ ազգերու մէջ Հայրենիք բառը այնպիսի ծածուկ զօրութիւն մ'ունի որ վախկոտներն ալ կ'արիացրնէ, ու ամէն տեսակ սքանչելիքներ գործել կու տայ : Յոյնք եւ Հռոմայեցիք կը ջանային Հայրենասիրութիւնը կաթին հետ մեկտեղ իրենց դաւկընէ-

րուն հաղորդել . անոր համար ալ իրենց մէջ տղոց արտարեկրած առաջին բառերէն մէկը՝ Հայրենիք բառն էր : Ասով այնչափ հայրենասէր մարդիկներ ունեցան , ասով այնչափ մեծամեծ վտանգներու մէջ յաղթող եղան , ասով մեծցան , պայծառացան , զօրացան : Չրդտնուիր մէջերնին մէկ անուանի մարդ մը՝ որն որ Հայրենասիրութեան մէջ նշանաւոր եղած չըլլայ . Լիւկուրդոս , Սողոն , Միլտիադէս , Թեմիստոկլէս , Արիստիդէս , . . . Բրուտոս , Կատոն , Փարիոս , Ռեզուզոս , Դեկիոս , Փարբիկիոս , Կիկերոն , . . . ամէնն ալ Հայրենասէր էին , ամէնն ալ հայրենեաց համար մեծամեծ գործքեր գործեցին , ամէնն ալ հայրենիքնին ամէն բանէն նաեւ կեանքերնէն ալ վեր կը բռնէին : — Ազգասէր էին առանց անձնասիրութեան . Թեմիստոկլէս հասարակապետութեան օգտակար խորհուրդ մը տուած ատեն՝ տեսնելով որ Եւրիբիատէս դաւազանը վերցուցած կ'ուզէ զարնել , աս երեք բառը կը զրուցէ . «Չարկ , բայց լսէ» : Ռեզուզոս՝ տեսնելով որ իր գերութենէն ազատելովը հայրենեաց մնաս պիտ'որ ըլլայ , մեծ աշխատութեամբ ծերակոյտը կը համոզէ որ զինքը չազատեն , ու Կարբեդոն դառնալով՝ սաստիկ տանջանքներով կը մեռնի : — Հայրենասէր էին առանց շահասիրութեան . Արիստիդէս երկայն ժամանակ Աթէնքին ելեւմուտքը ձեռքն ունենալէն ետեւ՝ մեռնելու ատեն եւ ոչ յուղարկաւորութեանը համար հարկաւոր եղած ստակը կ'ունենայ : — Հայրենասէր էին առանց փոքրոգութեան . Բրուտոս հայրենիքը պահպանելու համար՝ հայրենեաց մատնիչ ըլլող իր որդւոցը զլուխը կտրելու վճիռ կու տայ : — Մայրերը իրենց սաստիկ Հայրենասիրութեամբը կարծես թէ նոյն իսկ որդիքներնուն գութը կը մոռնային : Ո՞վ առանց արցունք թափելու կրնայ կարգալ ան Սպարտացի կնոջ իր որդւոյն ըսած խօսքը . Արի որդեակ , զէնք առ հայրենիքը պաշտպանելու

համար, եւ ուրիշ կերպով ետ մի դառնար, բայց եթէ կամ վահանովդ կամ վահանիդ վրայ. (այս ինքն կամ վահանդ ձեռքդ՝ յաղթող, եւ կամ հայրենեացդ համար մեռած): Ո՞վ կրնայ առանց սիրտն ելլելու լսել ուրիշ մօր մը՝ պատերազմի մէջ սրունքին մէկը կորսունցընող որդւոյն ըսածը. Ուրախ եղիր, որդեակ, մխիթարուէ. ինչու որ երբեք քայլ մը չես կրնար ընել առանց յիշելու որ հայրենիքդ պաշտպանած ես: — Շատ անգամ հայրենեաց անունն արտաբերելը՝ բաւական կ'ըլլար բորբոքած կիրքերը մարելու, մոլորեալները կարգի բերելու. Մենեննիոս Ազրիպպա՝ գլուխ քաշած ու Հռոմէն դուրս Նուիրական լեռան վրայ ժողվուած ժողովուրդը նորէն հնազանդութեան դարձնելու համար, Աետուրիա՝ սաստիկ զօրքով Հռոմի վրայ եկող որդին Արիստան իր վնասակար խորհրդէն ետ կեցընելու համար, Ատոն՝ Հռոմայեցւոց օրէնքներն ու հին բարքերը պահպանելու համար, Աիկերոն՝ Ատտիլինայի կողմնակիցները իրմէ բաժնելու համար, ... Հայրենիք, Հայրենասիրութիւն բառերը դործածեցին, հայրենեաց վրայ խօսեցան, ու անով ուղածներնուն հասան:

Իսկ Հայաստանեայց Հայրենասէրները մէկիկ մէկիկ յիշատակելը աւելորդ կը սեպեմ. ինչու որ մեր Հայրենասէր դիւցազանց պատմութիւնները՝ ամէն ճշմարիտ Հայրենասէր չէ թէ միայն աղէկ դիտէ, հապա նաեւ իւրաքանչիւր դք իր շափին եւ աստիճանին համեմատ եւ ժամանակին պարագաներուն ներածին չափ՝ անոնց օրինակին նմանելու կը ջանայ: Ո՞վ չըզիտեր Հայկայ մեր առաջին նահապետին Հայրենասիրութիւնը, որն որ հայրենիքը ծառայացընելու համար եկող Բելին սաստիկ ու ահեղ զօրութիւնը բանի տեղ չգրաւ, իրեն պէս Հայրենասիրութեամբ վառուած քիչ մարդիկներով դիմացն ելաւ, հետը զարնուեցաւ, յաղթեց ու հայրենիքն ազատ պահեց:

Ո՞վ չըզիտեր Արամայ Հայրենասիրութիւնը, որուն գերազանց կերպով հայրենեաց սէր ունենալուն համար Պատմագիրն ալ * իրեն մասնաւորապէս Հայրենասէր գեղեցիկ ու փափաքելի անունը կու տայ. որո՞ւն անծանօթ է իր նախանձախնդրութիւնը, որ թշնամիներուն յաղթելը բաւական չսեպելով՝ իրենց հրամայեց որ հայերէն լեզու սորվին ու հայերէն խօսին : Ո՞վ չըզիտեր Արայի Հայրենասիրութիւնը, որն որ աւելի ուզեց նախախնամութենէն իրեն յանձնուած հպատակները հայրաբար կառավարել, քան թէ Ասորեստանեաց հզօր թագաւորութեան թագաւոր ըլլալ, եւ աս բանիս համար կեանքն ալ սիրով հայրենեաց զոհ ըրաւ : Հայաստանեայց երեւելի Հայրենասէրները մէկիկ մէկիկ յիշատակելու համար պէտք էր Հայկազանց, Արշակունեաց, Բագրատունեաց, Ռուբինեանց ցեղերուն երեւելի իշխաններն ու թագաւորները բոլոր մէջ բերել, անոնց իշխանութեան ատեն ծաղկող հայրապետներուն, զօրավարներուն, նախարարներուն, զրազէտներուն վրայ խօսիլ, նաեւ անիշխանութեան ժամանակ ալ ատեն ատեն ելող անուանի մարդիկներուն վրայ խօսելու էր, որն որ անդերնիս թող չըտար :

Իսկ թէ որ Հայրենասիրութեան՝ կրթեալ ազգերու մէջ պատճառած երեւելի գործքերն ու բարիքները մանրամասն դնել ուզէինք, կարծեմ որ եւ ոչ հատորաւոր գրքեր բաւական կ'ըլլային : Այսչափ միայն կը զրուցենք որ աշխարհքիս մէջ ինչ որ երեւելի, ինչ որ մեծագործ, ինչ որ դիւցազնական բան կայ, ամէնն ալ կամ բուն Հայրենասիրութենէ ծագած են, եւ կամ գոնէ չկայ մէկը՝ որուն որ Հայրենասիրութիւնը նպաստաւոր եղած չըլլայ : Հայրենասիրութիւնը պատերազմի մէջ սքանչելիքներ կը գործէ, խաղաղութեան ատեն՝ արուեստներուն ու գիտութիւններուն

* Խորենացի. Գիբբ Ա. ԳԼ. ԺԳ :

ծաղկելուն գործակից կ'ըլլայ: Թշուառութեան ատեն՝ վիշա կրողներուն թիւը կը քիչցընէ կամ նեղութիւնը կը նուազցընէ. երջանկութեան ժամանակ՝ երջանկութիւնը շատերուն վայելել կու տայ: Չկայ մարդկան դաս մը, չկայ արուեստ մը, չկայ գիտութիւն մը, որն որ Հայրենասիրութեան մեծ պարտականութիւն չունենայ:

3. Այսչափ կը գործէ Հայրենասիրութիւնը կրթեալ ազգաց մէջ, այսչափ շատ են Հայրենասէրք քաղաքականացեալ ժողովրդոց մէջ. իսկ թէ որ քրիստոնէական կրօնքը իր բարերար թեւերը Հայրենասիրութեան վրայ տարածելու ըլլայ, երբ որ աս երկնային հուրը՝ Հայրենասիրութեան մէջ դանուած երկրաւոր մասունքը մաքրելու հանելու ըլլայ, իր ամէն բան չափաւորող իմաստութեամբը Հայրենասիրութիւնը իր պատշաճ չափին մէջ խօթելու ըլլայ, մէկ խօսքով՝ երբ որ կրօնքը՝ Հայրենասիրութիւնը աւելի եւս ազնուացընելու ըլլայ նէ, ան ատեն՝ ալ ոչ իր գոյութիւնն ընելու բաւական խօսք կրնայ դանուիլ, եւ ոչ ալ մարդս կրնայ վրան սքանչանալով յազիլ: Չենք ուզեր աս կրօնական Հայրենասիրութեան վրայ ճառել, վախնալով որ չըլլայ թէ մեր տկար խօսքերով՝ բուն իրը տկարացընենք. հապա միայն քանի մը օրինակներ կ'ուզենք բերել, եւ համառօտութեան համար՝ օտար օրինակները մէկգի ձգելով՝ ազգային պատմութենէն կ'առնենք. բայց կը ստիպուինք անոնց մէջէն ալ քանի մը երեւելիները միայն վեր ի վերոյ յիշատակել:

Մեր կրօնական Հայրենասէրներուն մէջ ամենէն յառաջ ո՞վ արդեօք յիշատակուելու արժանի է, եթէ ոչ ան զարմանալի Անձը, որն որ աստուածսիրութեամբ ու Հայրենասիրութեամբ միանգամայն բորբոքած ըլլալով՝ ընդհանուր ազգին մէջ քրիստոնէական սուրբ կրօնքը խօթեց: Իր քրիստոնէական Հայ-

րենասիրութեան ընթացքը գործքով սկսելէն յառաջ ցուցուցած սաստիկ տիրասիրութեան, սքանչելի անձնուրացութեան, քաջասիրտ մեծանձնութեան վրայ խօսիլն աւելորդ կը սեպեմ՝ արդէն այս ամենայն իր հաւատոյ զակընթերուն սրտին մէջ անջինջ տպաւորած է: Ամէն Հայ մարդ աղէկ գիտէ թէ աս սաստուած պաշտութեան քաջ Նահատակը իր բարձր պաշտօնն ի գործ գնելու սկսելէն յառաջ՝ ինչպիսի տանջանքներէ անցաւ: Թէ որ Աստուծոյ խորհուրդներուն մեկնութիւն տալը յանդգնութիւն չըսեպօւիրնէ, կրնանք ըսել որ իրեն այնչափ ահագին տանջանքներ քաշելը թող տալուն պատճառներէն մէկն ալ աս էր, որ ետքը իր հայրենակցաց աւելի սէր ունենայ. ինչու որ մէկու մը պատճառաւ կրուած նեղութիւններուն ու վշտերուն սաստկութիւնը՝ հասարակօրէն իրեն ունեցուելու սիրոյն չափը կ'ըլլայ, ինչպէս՝ մայրերը իրենց որդւոցը այնչափ աւելի սէր կ'ունենան, որչափ որ աւելի ցաւով զիրենք ծնած են: Ուստի եւ երբ որ մէյ մը Ս. Գրիգոր իր բարձր ու սաստուածային Հայրենասիրութեան ընթացքը սկսաւ, այնչափ մեծ եռանդով իր հայրենակիցներուն օգտին համար կը գործէր, որ ամենեւին աշխատութիւն մը, նեղութիւն մը աչքին առջեւը բան մը չէր երեւար. օրերն ու շաբաթները ամենեւին առանց հանգչելու անսուաղ կ'անցընէր, եւ միայն իր հոգեւոր խօսից հացը սիրելի հայրենակիցներուն ջամբելով կը յագենար: «Անդադար զցայգ եւ զցերեկ ոչ դագարէր երբեք աւուրս վաթսուն եւ հինգ խօսել, խրատել եւ ուսուցանել եւ հաստատել»*: Իսկ ան ընդարձակ Հայոց աշխարհին ամէն կողմը պարտելով մեհեանները քակելու, կոոց արձանները կործանելու, քրմերը յաղթահարելու եւ դարձնելու, ամէն տեղ եկեղեցիներ կանգնելու, վանքեր շինելու, դպրոցներ բանալու, ուսում ու կրթութիւն տարածելու համար

* Ագաթ. Ճ. 541 :

կրած աշխատանքներն ու վշտերը որ դրիչ բաւական է ստորագրել: Այսպէս իր հայրենակիցներուն նուիրեց բոլոր իր պատուական կեանքը:

Եւսաւորչին աս զեղեցիկ ոգին իր աստիճանին հետ մէկտեղ իր զաւկներուն ու յաջորդներուն անցաւ. Արիստակէս, Արթանէս, Յուսիկ, Գրիգորիս, ամէնքն ալ նոյն սիրով իրենք զիրենք հայրենեաց համար զոհեցին: Բայց կրնանք համարձակ ըսել որ զամէնքը գերազանցեց Մեծն Ներսէս: — Ներսէս Մեծ. Հայրենասէր սրտի ինչ քաղցր ու ցանկալի աշուն: Լսենք մէյ մը յոյն պատմագրին իր վրայ ըսածները. «Նրկիւղած ի Տեառնէ Ասաուծոյ . . . մարդասէր, . . . սաստիկ իմաստուն եւ առանց ակնառութեան, իրաւանց իրաւարար . . . աղքատասէր: . . . Եւ առ իւր ընկերս ըստ պատուիրանին սիրել զամենայն ընկեր իբրեւ զանձն: . . . Եւ զաղքատս եւ զտառապեալս այսպէս սիրէր եւ ակն ածէր ի վերայ նոցա, զի զիւր ինչ զհանդերձս եւ զկերակուր հասարակէր ընդ նոսա: Եւ նեղելոց եւ տարակուսելոց օգնական եւ վերակացու եւ ջատագով ամենայն զրկելոց լինէր նա», * : Աս սքանչելի ոգին ունէր Ներսէս զեւ զինուորութեան մէջ եղած ատեն. ասկից կրնայ մտկաբերուիլ թէ ինչ աստիճանի հասած պիտ'որ ըլլայ, երբ որ բոլոր ազգին հայրապետ ընտրուելով՝ հասարակաց հայր եղաւ: Եւ ստուգիւ հօր պէս, մանաւանդ թէ կը համարձակիմ ըսել՝ հօրմէ աւելի սիրեց ու հոգաց իր հայրենակիցները: Աս իր Հայրենասիրութեան սքանչելի գործքերուն որ մէկը յիշեմ: Ամէն տեղ հիւանդանոցներ, աղքատանոցներ շինեց, ու ամենուն մուտք կապեց, որպէս զի աղքատներն ու խեղերը հանգրստութեամբ հոն ապրին, եւ դռնէ դուռ պտրտելով մուրանալու չհարկադրին: Ան ալ բաւական չէ, աղքատները, տառապեալներն ու ցաւագարները շատ

* Բուզ. Դ. Դպր. Գ. ԳԼ. 68, 69:

անդամ տունը կը ժողվէր, սեղանին վրայ առած, մեկտեղ կերակուր կ'ուտէր, մանաւանդ թէ իրենց կը ծառայէր ու սուրբ ձեռուրներովը ոտուրնին կը լուար, վէրքերնին կը պատէր, կը մխիթարէր, կ'ուրախացնէր: Այրիներուն ու որբերուն դարման կը տանէր ու վշտերնին կը թեթեւցնէր, գերիները կը փրկէր, բանտարկեալներուն այցելութեան կ'երթար, ու շատերը կ'ազատէր: Հայաստանին ամէն կողմերը դպրոցներ, վարժարաններ շինել կու տար, ու չորս կողմանէ քաջ վարժապետներ ժողվելով՝ սւսումն ու գիտութիւնը հայրենեաց մէջ տարածելու փոյթ կը տանէր: Աերջը չէր դար թէ որ հայրենեաց բարւոյն համար բրածները, թագաւորութեան օգտին ու հաստատութեան համար դործածները ուղեինք մէկիկ մէկիկ յիշել. անոր համար խօսքերնիս կը լմնցընենք Բուզանդայ ըսածովը. «Առ ամենեսեան զխրատ վարդապետութեանն առհասարակ իբրեւ զհայր բազմագութ իբրեւ զմայր գթած ցուցանէր. զհոգեւոր սիրոյն եռանդն ածէր առ ամենեսին . . . : Եւ զվերակացութիւն աշխարհին ամենայն հոգաբարձութեամբ առանց ամենայն յուլութեան եւ ամենայն յապաղութեան տանէր մինչեւ ի վախճան իւր, եւ ոչ երբեք ուրեք եղեւ նման նմա այլ ոք ի Հայաստան երկրին»,*:

Մեծն Ներսէս յիշելէն ետեւ՝ արդեօք ուրիշ մէկը կրնանք գտնել, որ այնպէս երեւելի ըլլայ, որ իր Հայրենասիրութիւնը՝ անոր համեմատութեամբ ոչինչ կամ փոքր բան մը չերեւայ: — Շատ հեռու ժամանակ երթալու, շատ երկայն փնտռելու հարկ չկայ. իրմէ քիչ մը վերջը առջեւնիս այնպիսի անձինք կ'ելլեն, որոնք եթէ զՆերսէս չգերազանցեցին նէ, դոնէ իրմէ վար ալ չմնացին: Սքանչելին Սահակ մեծ եւ իր աջակիցը Մեսրոպ վարդապետ: Ի՛նչ ընդարձակ

* Բուզ. Դ. Դպր. Դ. ԳԼ. 79:

դաշտ կը բացուի առջեւնիս . իրենց զարմանալի Հայրենասիրութիւնը եւ անկից ծագած բարիքները աղէկ մը իմանալու համար՝ Կորեան բոլոր պատմութիւնն ու խորենացւոյն մէկ մասը՝ դոնէ քաղելով հոս բերելու էր : Ապա թէ ոչ ինչպէս կարելի է որ հայերէն գիր ու դպրութիւն գտնելու համար ունեցած փոյթերնին, կրած անհնարին աշխատութիւննին, բրած ճամբորդութիւննին, թափած քրահնքնին, անբուն անցուցած գիշերներնին, անսուաղ մնացած ցորեկներնին ... նկարագրենք : Ինչպէս կրնանք հայերէն դպրութիւնը ծաղկեցընելու, լեզուն մշակելու, դպրոցներ հաստատելու, աշակերտներ կրթելու, ազգին մէջ ուսում ու գիտութիւն տարածելու համար բրածներնին տկար լեզուովնիս բացատրել : Աս միայն բաւական ըլլայ ըսել, որ եթէ իրենք չըլլային՝ դուցէ լեզունիս բոլորովին կորսուած կամ մեզի անծանօթ լեզու մը եղած կ'ըլլար, դուցէ, դուցէ (կը զարհուրիմ ըսելու) ազգայնութիւննիս բոլորովին կորսընցուցած՝ Պարսից ու Յունաց մէջ խառնուած կ'ըլլայինք ... : Իսկ եթէ հայրենիքնիս զանազան մեծամեծ թէ ներքին ու թէ արտաքին վտանգներէն ազատելու համար ունեցած փոյթերնին ալ ասոր վրայ աւելըրնելու ըլլանք, անատեն ամենեւին չենք տարակուսիր զիրենք իբրեւ երկրորդ Լուսաւորիչ մեծարել :

Իսայ ինչ ըսենք իրենց ձեռնասուն աշակերտներուն ու իրենց յաջորդներուն վրայ, որոնց մէջէն մէկը չկայ որ իրենց հարցը ճշմարիտ ու աստուածային Հայրենասիրութեան հոգին ժառանգած չըլլայ : Ասոնց մէջէն ելան ան զարմանալի նահատակները՝ որոնք որ կրնանք իրաւամբք Հայաստանեայց Հայրենասէրներուն պսակն անուանել, այս ինքն Արդանանք ու Ղեւոնդեանք : Ասոնց Հայրենասիրութիւնը՝ որ աստուածային սէրէն կառավարուած ու առաջնորդուած էր, ստուգիւ մինչեւ դիւցաղնութիւն

կը հասնի, եւ կրնանք ճշմարտութեամբ ըսել թէ ասոնց Հայրենասիրութենէն մեծ Հայրենասիրութիւն չըկրնար դանուիլ. որովհետեւ հարստութիւննին, աստիճաննին, պատիւննին, ամէն բան հայրենեաց զօհ ընելէն, հայրենեաց ազատութեան, հայրենատուր կրօնից պաշտպանութեան, հայրենիքը կռապաշաներու բռնութենէն ու հայրենակիցներնին կռապաշտութենէն ազատելու համար կեանքերնուն մինչեւ վերջին ըստէն պատերազմելէն ետեւ՝ իրենք զիրենք ալ դրին հայրենեաց համար, կեանքերնին ալ զօհեցին հայրենեաց կրօնին համար:

Խօսքերնիս շատ շերկընցընելու համար հարկ է որ լուութեամբ անցնինք Ե. դարէն մինչեւ ժէ. դար: Լուենք այնչափ երեւելի հայրապետները, որոնց՝ ազգը բարեկարգելու, հայրենի աւանդութիւնները հաստատուն պահելու, ազգը յառաջացընելու ու լուսաւորելու համար բրած ջանքն ու ճիգը անկարելի է որ Հայրենասէր սիրտ մը չշարժէ: Լուենք այնչափ հոյակապ թագաւորներն, իշխաններն ու զօրապետները, որոնք իրենց արեամբն ու կեանքովը Հայրենասիրութիւննին պսակեցին. ու անցնինք ան սքանչելի մարդուն, որուն նմանը շատ դարերու մէջ հազիւ աշխարհք կու գայ, որուն անունը ամէն Հայ յարգութեամբ բերանը կ'առնու, որուն յիշատակը միայն բաւական է ազնուական սրտի մէջ Հայրենասիրութիւնը վառելու, որն որ Լուսաւորչէն ու Թարգմանիչներէն ետեւ՝ Նորոգիչ Հայաստանեայց կոչուելու արժանի է. մէկ խօսքով՝ անցնինք Մխիթարայ: Բայց ինչպէս կարելի է իր սաստիկ Հայրենասիրութիւնը համառօտ կերպով մը հասկըցընել. . . : Բարեբախտութեամբ ըսելիքնիս ամէն մարդ, որ հայրենասիրութեան է որ ամենուն դիպցաներուն յիշատակը միայն որուն մէջ զարթուցաներ համար իր սքանչելի կրօնացի թիմացքին վրայէն շատ մը եւ իրենց թեթեւակալ անցնինք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎԱՆ
 Ա. ՄՅԱՍԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Այլ թէ միայն երիտասարդութեան հասակէն, հաւ-
 պա աղայութենէն՝ ազգին ողորմելի վիճակին վրայ
 գլխաւով, եւ իր նոյն ատենէն հասունացեալ մտօքն
 իմանալով որ ասոր դարմանը՝ միայն ճշմարիտ ուս-
 մամբ ու գիտութեամբ կրնայ զանուիլ, իբրեւ աս-
 տուածային նախահնամուժենէն ընտրուած գործիք,
 միտքը դրաւ որ առ բանիս ձեռք զարնէ. ձեռք զար-
 կաւ, միջոցները գտաւ ու գլուխ հանեց: Բայց թէ
 աս իր հայրենասիրական խորհուրդը իրեն սրչափ
 ծանր նստեցաւ, ինչպիսի անհնարին աշխատութիւն-
 ներ, սրչափ նեղութիւն, սրչափ վիշտ կրեց կատա-
 րելու համար, թող վկայեն Սեբաստիա, Եւգոկիա,
 Արին, Երեւան, Բերիա, Աղէքսանդրիա, Ախպրոս,
 Կոստանդնուպոլիս, Սինոպ, Մարզուան, Մոռա, Հոռոմ,
 եւ ի վեր քան զամենայն՝ Վենետիկ եւ Ս. Ղազար,
 որոնց մէջ ետեւէ ետեւ՝ աս իր վախճանին հասնելու
 կամ բարձրագոյն կերպով մը հաստատուն ընելու
 համար՝ Հայրենասիրութեան թեւերուն վրայ՝ իբրեւ
 պանդուխտ պարտեցաւ: Վկայեն Ս. Կշմանու, Սեւան
 անապատին, Էջմիածնայ, Բասենոյ, Կարմիր վան-
 քերը, որոնց մատենագարաններուն ու գրքերուն
 մէջ գիշեր ցորեկ ընկղմած՝ իր ծարաւը յազեցընելու
 կը ջանար: Վկայեն Անանիա եպիսկոպոսը, Ղազար
 վարդապետը, Միքայէլ արքեպիսկոպոսը, Մեւքի-
 սէթ եպիսկոպոսը, Խաչատուր վարդապետը, Մար-
 դար եպիսկոպոսը, որոնց հետզհետէ աշակերտեցաւ
 կամ ընկերացաւ սաստիկ մեծ նեղութիւններ ալ
 կրելով, աս իր վախճանին հասնելու համար: Վկայեն
 ան սեպտեմբեր լեռներն ու անմատչելի զահաւանդ-
 ները, որոնց վրայէն ըստ մեծի մասին ոտքով անցաւ,
 մինչեւ շատ անգամ ուժը կտրելով՝ մարած գետինն
 ինկած կը մնար: Վկայեն ան սրբնթաց գետերը՝ որոնք
 որ լողալով անցաւ, ու ան մրկեալ ծովերը՝ որոնց
 մէջ գրեթէ հրաշքով մահուրնէ ազատեցաւ: Վկայեն

ձմեռը անհնարին ցրտութեան ատեն՝ վրան պարզ վերարկուաւ մը ձեան վրայ անցուցած գիշերները, եւ ամառը սաստիկ տապոյ ժամանակ՝ երկիրը դործելով անցուցած ցորեկները: Ակայեն աս սաստիկ նեղութիւններէն ծագած հիւանդութիւնները, երկայն ժամանակ աշուրներուն լոյսը կորսունցընելը, սաստիկ ջերմ կրած ատեն կաթիլ մը ջուր տուող շունենալը, շատ անգամ օրերով առանց օգնականի ու մխիթարութեան մնալը, զրեթէ բոլոր կեանքին մէջ կրած խիստ աղքատութիւնը: Աերջապէս վկայեն իր թշնամիներէն ու նախանձորգներէն կրած հալածանքները, որով քաղքէ քաղաք թափառական պտրտելու պարտաւորեցաւ. վկայեն անոնցմէ ընդունած նախատինքները, թշնամանքներն ու վնասները, վկայեն վրան եղած չարախօսութիւններն ու զբպարտութիւնները, որոնք միայն առանց ուրիշ բանի բաւական էին չափաւոր սէր մը մարելու:

Իսոյց Մխիթարայ դիւցազնական Հայրենասիրութիւնը՝ որուն հիմն ալ աստուածսիրութիւնն էր, ասոնցմով չէ թէ միայն շմարեցաւ, հապա նաեւ կարծես թէ դիմացն ելած դժուարութիւններէն՝ աւելի եւս սաստկացաւ, ու կրած վշտերէն՝ աւելի եւս բորբոքեցաւ: Քիչ կրակը մարող ջուրը՝ սաստիկ կրակը աւելի եւս կը բորբոքէ. ճրագի մը բոցը մարող հովը՝ զամբարին բոցը աւելի կը սաստկացընէ: Նոյնը պատահեցաւ Մխիթարայ ալ. որչափ որ հակառակորդները իրեն աւելի վիշտ կը հասցընէին, ինքն ալ այնչափ Հայրենասիրութիւնը կը մեծցընէր: Տեսէք ինչ կը զրէ կենացը վերջին ժամանակները. Թէպէտ եւ, կ'ըսէ, բոլոր կենացս մէջ նախատուիմ ու հալածուիմ, ի վերայ այսր ամենայնի ազգիս սէրէն ու իր սիրոյն համար բրած գործքերէս ամենեւին ետ չեմ կենար*: Ամեծանձն ոգի, ո՞ զարմանալի Հայրենասիրու-

* Աստուածաշնչին յիշատակարանին մէջ:

Թիւն : Իսկ ասկից յառաջ եկած պատուները, ազգին եղած օգուտները ցուցնելու համար երկայն խօսքերու կարօտութիւն չունինք . թող ամէն անկողմնակալ Հայրենասէր Մխիթարայ ժամանակէն յառաջ ազգին գտնուած վիճակը, հայերէն լեզուին խանգարումը, ուսմանց, դպրոցաց, դրքերու նուազութիւնը աչքին առջեւը բերէ, ու հիմակուաններուն հետ համեմատէ . աս միայն բաւական կ'ըլլայ զՄխիթար իր պատշաճ տեղը դնելու, եւ միանգամայն ազազակել տալու, որ Երբ որ կրթութենէն օգնութիւն գտած Հայրենասիրութեան՝ կրօնը նեցուկ կ'ըլլայ, կը լուսաւորէ ու կ'առաջնորդէ, իր յառաջ բերած օգուտները բացատրելու համար մարդկային լեզուն բաւական խօսք չըկրնար գտնել :

Բ .

Հայրենասէր ըլլալ ուղղել էր Հայրենասիրութեանը փութորութիւնը քանի մը պիտի ցուցնէ :

Ամէն կիրք կամ զգածմունք կրնայ ծածկուիլ, կ'ըսեն իմաստունք, բայց իրական ու ճշմարիտ սէրը, մանաւանդ երբ որ սաստիկ է, անկարելի է որ կարող ըլլայ ծածկուիլ : Ատոր պատճառն ի՞նչ է : Ասան զի երբ որ սէրն իրական ու ճշմարիտ է, չըկրնար առանց արտաքին նշանի, առանց արտաքուստ գործելու մնալ : Սէրն իրական ըլլալու համար՝ բաւական չէ որ մարդը իր սիրոյն առարկային ներքուստ յօժարութիւն ունենայ, հապա պէտք է որ միանգամայն արտաքուստ ալ աս յօժարութեան նշաններն ու գործքերը ցուցնէ . այնպէս որ շատ անգամ նաեւ ակամայ ալ կը յայտնէ : Երեւակայէնք մայր մը, որ զանազան պարագաներու համար ուզէ օտարականներու առջեւ մէկու մը իր որդին ըլլալը ծածկել . ենթացքէնք որ աս մայրը մէկէն իր որդին վտանգի մէջ ինկած տեսնէ . արդ կարելի է որ բնութիւնը զսպէ, սէրը ծածկէ : Անկարելի բան է . ներքին մղումը զինքը կը ստիպէ

որ օգնութեան հասնի, ուրիշներուն օգնութիւնը ինդրէ. որով եւ իրեն՝ ան մարդուն ունեցած սէրը կը յայտնէ: Աս է սիրոյն բնութիւնը. բայց աս է միանգամայն իր ճշմարիտ ու իրական ըլլալուն երեւելի փորձաքարներէն մէկը. ուստի եւ ան սէրը՝ որն որ միայն ներքին է, որն որ միայն խօսքով է, շատ տարակոյս կայ որ ճշմարիտ ու իրական սէր ըլլայ. բայց երբ որ գործքով, մանաւանդ երբ որ հետը դժուարութիւն ունեցող գործքով է, կրնայ ըսուիլ որ ճշմարիտ սէր է: Բոցը՝ ճշմարիտ ու իրական բոց ըլլալու համար՝ պէտք է որ այրէ:

Ասկից կը հետեւի ուրեմն որ Հայրենասիրութիւնը ճշմարիտ ըլլալու համար՝ պէտք է որ գործքով ըլլայ. ան ներքին յօժարութիւնը՝ որն որ մարդս իր հայրենակիցներուն համար կ'ունենայ, եւ կամ կը կարծէ որ ունենայ, զորն որ շատ անգամ նաեւ խօսքով ալ կը յայտնէ, կրնայ խաբէական ըլլալ: Ճշմարիտ ու իրական Հայրենասիրութեան բուն ցոյցը՝ հայրենեաց օգտին, հայրենակիցներուն սիրոյն համար եղած գործքերն են: — Բայց ըստ ինքեան յայտնի է որ աս գործքերը ամէն մարդուն համար նոյն չեն կրնար ըլլալ. հապա ամէն մէկ Հայրենասէր՝ իր վիճակին, իր աստիճանին, իր կարողութեան համեմատ գործքեր պէտք է որ գործէ իր հայրենակցաց համար. ուստի եւ Հայրենասիրութիւնը ամէն մարդուն վրայ՝ իր վիճակին համեմատ պարտականութիւններ կը դնէ, որոնք պէտք է որ կատարէ, եւ որոնք իւրաքանչիւր մարդուն Հայրենասիրութեան ցոյցը կ'ըլլան:

Ճշմարիտ Հայրենասէրը թէ որ պաշտօնի մէջ է, իր Հայրենասիրութեան պարտքը կատարելու համար, պէտք է որ ինքը զինքը գրեթէ բոլորովին մոռնալով՝ բոլոր իր գործքերուն միակ վախճանը՝ իր հայրենակիցներուն երջանկութիւնը դնէ: Պէտք է որ չէ թէ իր կամքը, հապա օրէնքները կատարել տալու ետե-

ւէն իյնայ: Իր ամէն գործքերուն սկիզբն ու վախճանը, իր վախճանին հասնելու համար ամէն ի գործ դրած միջոցները՝ արդարութեան համաձայն պիտ'որ ըլլան: — Թէ որ կարողութեան տէր մարդ է, պէտք է որ ունեցածին մէկ մասը հայրենակիցներուն օգտին համար գործածէ. աղքատներուն, կարօտներուն, թշուառութեան մէջ ըլլողներուն օգնութեան հասնելու է: Պէտք է որ հայրենեաց բարիք ընողները վարձատրէ, զանազան տեսակ տաղանդի տէր մարդիկներուն՝ սրտնք որ հայրենեաց նպաստամատոյց ըլլալու բաղձանք ունին, բայց կարողութիւննին չը հասնիր ձեռք բռնէ, յառաջ տանի, քաջալերէ: Հրապարակական շէնքերու, դպրոցներու, հիւանդանոցներու օգնելու մէջ ուրիշներուն բարի օրինակ ըլլալու է: Պէտք չէ որ աղքատներն արհամարհէ, օրէնքներն անարգէ, իշխանութիւնը սուրբի տակ առնու: Աերջապէս միտքը դնելու է որ հարուստ ըլլալուն համար՝ բարի քաղաքացւոյ մը ամենեւին մէկ պարտքէն ազատ չէ. հապա անոր հակառակ՝ թէ որ իր ու աղքատներուն մէջ զանազանութիւն մը կայ նէ, ան է որ ինք՝ հարստութեան պատճառաւ ուրիշներուն վրայ ազդեցութիւն ունենալուն համար՝ պէտք է որ անոնցմէ աւելի օրինապահ ըլլայ, որպէս զի անոնց բարի օրինակ տայ: — Թէ որ գիտուն է, պէտք չէ որ ինքը զինքը մեծ բանի տեղ դնէ, հապա իրրեւ թէ գիտցածը մոռնալով՝ օր քստ օրէ աւելի եւս յառաջանալու ջանայ: Տգէտներն ու ուսումնական չըլլողները պիտի չարհամարհէ, հապա վրանին դուրս ու սէր պիտ'որ ունենայ, մտածելով որ անոնք մտքերնին գիտութեամբ լուսաւորելու համար իր ունեցած միջոցները չեն ունեցեր. եւ այսպէս ձեռքէն եկածին չափ՝ զանոնք լուսաւորելու, իր գիտութիւնը որչափ որ կարելի է անոնց հաղորդելու, տարակոյսնին լուծելու, իր օգ-

տակար խորհուրդներովը գործքերնուն մէջ անոնց առաջնորդելու ետեւէն պիտ'որ իյնայ: Բոլոր իր հայրենակիցները իրեն հետ մեկտեղ իբրեւ մէկ մարմին համարելով՝ պիտի ջանայ որ ինք անոնց մտաց տեղ ծառայէ:

Աս երեք աստիճանի մարդիկներու վրայ ըսածներնէս՝ անոնց հակառակ վիճակի մէջ գտնուողներուն պարտքը՝ ինք իրմէ կը հետեւի: Ուստի եւ պաշտօնի մէջ չգտնուող եւ իշխանութեան տակ եղող մարդիկ պէտք է որ առաջիններուն յարգութիւն ունենան, զիրենք իբրեւ օրինաց մեկնիչ եւ գործադիր, իբրեւ Աստուծոյ փոխանորդ պատուեն: Անոնց վրայ պէտք է որ վստահութիւն ունենան, առանց պատճառի վրանին կասկածի չերթան. վրանին պակասութիւն մը տեսած ատեննին՝ պէտք չէ որ նոյն պակասութեան համար զիրենք գէշ, անիրաւ, չարագործ մարդու տեղ դնեն, եւ ուրիշներուն առջեւն ալ անոնց յարգութիւնն ու պատիւը նուազցընեն. հապա ձեռքերնէն եկածին չափ՝ անոնց պակասութիւնները ծածկելու, ուրիշներուն առջեւը զանոնք ջատագովելու ջանան. եւ թէ որ անոնց անձն ալ չէ նէ, գոնէ աստիճաննին ու պաշտօննին մեծարելու են, որպէս զի օրինաց յարգութիւնը չնուազի, օրինապահութիւնն ու կարգաւորութիւնը մնաս չկրէ: — Միջակ կարողութիւն ունեցող կամ աղքատ մարդիկ պէտք չէ որ հարուստներուն նախանձ ունենան. պէտք չէ որ ամէն բանի մէջ անոնց բռնած ճամբան բռնելու ետեւէ իյնան: Ասկից զատ՝ պէտք չէ պահանջեն որ հարուստները բոլոր ունեցածնին ուրիշներուն համար գործածեն, եւ տեսնելով որ մէկու մը կամ երկու հոգւոյ խնդիրքը չեն կատարեր ու անոնց օգնութեան չեն հասնիր, ըսեն որ ազահ ու խտասիրտ են: Գարձեալ մեծ հարստութիւն չունենալուն համար պէտք չեն կար-

ծել որ հայրենեաց համար ամենեւին բան մ'ընելու պարտականութիւն չունին. հապա ունեցածներնուն համեմատ պէտք է որ օգնեն, եւ եթէ մէկ կերպով չեն կրնար նէ՝ գոնէ ուրիշ կարելի կերպով անոր տեղը լեցընեն: — Գիտութիւն չունեցող կամ արուեստաւոր մարդիկներէն ամենէն յառաջ պահանջուած բանն ան է որ գիտութիւնը չարհամարհեն, չբսեն թէ ինչ պէտք է ուսում, ինչ օգուտ ունին գիտունք. հապա անոնց օգուտը ճանչնալով՝ մեծարեն, ու անոնց գիտութիւնը իրենց օգտին գործածելու ջանան: Ազգին մէջ գիտութեան յառաջանալուն, գիտուններուն շատնալուն վրայ ուրախանան, եւ աս բանիս՝ ձեռքերնէն եկածին չափ գործակից ըլլան, եւ թէ որ իրենք ալ չեն կրնար սորվիլ նէ, գոնէ իրենց զաւկներուն, իրենց հոգացողութեան տակ ըլլողներուն սորվեցընել տալու աշխատին . . . :

Արկայն խօսքեր ու մեկնութիւններ հարկաւոր չէ՛ ցուցընելու որ աս ամէն ըսածներնիս աղէկ կատարելու համար՝ ամէն մարդ ինչ աստիճանի մէջ կ'ուզէ գտնուի, ինչ կարողութեան տէր որ կ'ուզէ ըլլայ, պէտք է որ առաքինի կամ մոլութիւնները զսպած եւ իր անձին վրայ տիրած ըլլայ: Ասով միանգամայն յայտնի կ'իմացուի որ ճշմարիտ ու իրական Հայրենասիրութիւնը՝ միայն առաքինութեամբ կրնայ կատարուիլ, եւ ճշմարիտ Հայրենասէր՝ միայն առաքինին կրնայ ըլլալ, եւ ուր որ առաքինութիւն չկայ՝ հոն ճշմարիտ Հայրենասիրութիւն ալ չըկրնար ըլլալ: Առաքինութիւններն իրարու հետ այնպէս անձուկ միացած են, որ մէկը պակասածին պէս՝ մէկալներն ալ կը պակսին կամ գոնէ անգործունեայ կ'ըլլան: Ուստի եւ իրաւամբ կրնանք Շաղոպրիանին գեղեցիկ ու վճռական խօսքը հակառակին փոխելով բսել. Ար տարակուսինք որ մէկը առանց առաքինութեան կարող ըլլայ ճշմարիտ Հայ-

բենասիրութիւնն ունենալ : Ասոր վրայ աղէկ մը համոզուելու համար՝ աշուրներնուս առջեւը քանի մը հոգի բերենք, որոնք կիրքերնուն վրայ բոլորովին տիրած չըլլալով, բարոյական կրթութեամբ մոլուածիւններնուն աղէկ սանձ դրած չըլլալով, իւրաքանչիւրը միայն մէյ մէկ մոլութիւնն ունենայ : մէկը անձնասէր, մէկը նախանձոտ, մէկը փառասէր, մէկը ազահ, մէկը բարկացող, մէկը կռուու... ըլլայ . ու քննենք տեսնենք որ ասոնք Հայրենասէր կրնան ըլլալ : Աս քննութիւնը անոր ալ կ'օգնէ որ յայտնի տեսնենք թէ մոլութիւնները՝ ազգի մը յառաջագիմութեան ու երջանկութեան ինչպէս մեծ արգելք կ'ըլլան, եւ գլուխը ինչպիսի մեծամեծ չարիքներ կը հասցընեն :

Անձնասէրը միայն ինքը զինքը կը սիրէ, եւ ուրիշը սիրէ ալ նէ՝ միայն իրեն համար կամ իր շահուն համար կը սիրէ . միայն յինքն կը հանգչի, եւ ուրիշ բանի վրայ հանգչած ժամանակը՝ մեղուի պէս անկից իրեն օգտակար եղածը ծծելու առնելու համար կը հանգչի * : Բոլոր չորս կողմն եղած բաները իր շահին ու դիւրութեան ծառայեցընելու կը ջանայ . ինքը զինքը տիեզերաց կենդորոնը կը դնէ, եւ իբրեւ թէ միտքը դնելով որ աշխարհքիս մէջ ամէն բան իրեն համար եղած է, կ'ուզէ որ ամէն բան իրօք ալ իրենն ըլլայ, ամէն բան իր հաճոյքը կատարելու օգնէ : Ինքը զինքը ամէն մարդիկներէն վեր բռնելով՝ կը պահանջէ որ ամէնքը զինքը սիրեն, զինքը պատուեն, վրան զարմանան ու իր կամքը կատարելու ջանան : Ա'ուզէ որ աշխարհքիս մէջ պատահած ամէն դէպքերը իրեն աղէկ երեւցածին պէս ըլլան . արեւակը իրեն համար ելէ ու իրեն համար մանէ** : Ասով յայտնի է որ անիրաւ, անազորոյն, բռնաւոր, նախանձոտ, կռուող... կ'ըլլայ . որովհետեւ

* Մասկլենն :

** Լա Ռոշֆուրայ :

տեւ անձնասիրութիւնը ամէն մոլութիւններուն սեր-
մը իր մէջը կը բովանդակէ: Արդ այսպիսի մոլու-
թեան տէր մարդ կրնայ Հայրենասէր ըլլալ, կրնայ
Հայրենեաց փոքր բարիք մ'ալ ընել: Անկարելի է,
սիրտը անձին սիրովը այնպէս լեցուած է, որ ու-
րիշ բանի սէր ամենեւին չըկրնար մէջը տեղ գտնել:
Եւ թէ որ արտաքուստ Հայրենասիրութիւն ալ ցու-
ցընելու ըլլայ, սուտ է, կեղծաւորութիւն է, իր
անձնասիրութեան բանեցուցած հազարումէկ միջոց-
ներուն մէկն է. ինչու որ աս մոլութիւնը գոհ ընե-
լու համար ամէն կերպարանք կ'առնու, ամէն միջոց
կը բանեցընէ:

Նախանձտը ուրիշին ունեցած բարիքը, մեծու-
թիւնն, աստիճանը, պատիւը, հարստութիւնը չըկր-
նար քաշել: Ազգին մէջ իմաստուն, գիտուն, հա-
րուստ, պատուաւոր մարդիկներ գտնուելուն վրայ
ուրախանալու, եւ անոնց եղած բարիքը՝ իրեն անձին
եղածի պէս սեպելու տեղ՝ անոնց վրայ կը տրամի
ու կը տխրի: Ազգին մէջ գտնուած ամէն մէկ գի-
տուն, ամէն մէկ հարուստ, ամէն մէկ պատուաւոր
անձը՝ մէյ մէկ օձ է որ սիրտը կը կրծէ, զինքը կը
հիւծէ ու կը մաշէ: Ուրեմն ով որ մեծ տաղանդ-
ներու տէր ու հայրենեաց բարերար է, ի հարկէ՛նա-
խանձոտներուն աչքին փուշ կ'ըլլայ. ուստի եւ կը
ջանան զինքը իրենց մոլութեան զոհ ընել, եւ շատ
անգամ ալ վախճաններնուն կը հասնին. ոմանք
իրօք հայրենեաց օգնելու կարողութենէն կը զրկեն,
ոմանց ալ սիրտը նեղելով՝ հայրենեաց բարիք ընե-
լու բաղձանքնին կորսուցընել կու տան: Եւ թէպէտ
նախանձը մարելու համար պէտք չէ որ մարդը առա-
քինութենէն ետ կենայ, ի վերայ այսր ամենայնի
ամէն մարդ ան աստիճանի զօրաւոր առաքինութիւն
չունի որ թէ՛ բարիք ընէ եւ թէ՛ ըրած բարիքին
համար երախտադիտութիւն գտնելու տեղ՝ նախան-

ձու ու ատելութեան պատահի, նեղութիւն ու վիշտ կրէ, եւ բանի տեղ չգնելով՝ ըրած բարիքը շարունակէ: Ասով ինչպէս ըսինք, շատերը այսպիսի նեղութենէ ազատելու համար՝ ընելու բարիքնին մէկդի կը ձգեն, ետ կը քաշուին. որով հայրենիքը մեծամեծ բարիքներէ կը զրկուի: Ապա ուրեմն նախանձօտը չէ թէ միայն հայրենասէր չըլնար ըլլալ, հապա նաեւ ուրիշին Հայրենասիրութեան ալ արգելք կը դնէ, Հայրենասիրութեան գործքերը կը խափանէ:

Փառասէրը՝ որուն քաղցը ամենեւին պատուով մը, աստիճանով մը չըյազենար, կ'ուզէ որ ազգին մէջ ամենէն վեր ըլլայ. իրմէ վեր մէկ հոգի ալ տեսնէ նէ, հանգիստ չունենար, ամէն կերպով կը ջանայ որ զանիկա վար ձգէ ու ինք անոր տեղն անցնի: Թող ամէն մարդ մտածէ աս վախճանին հասնելու համար գործածած միջոցները. խարդախութիւն, նենգութիւն, չարախօսութիւն, զրպարատութիւն, ... ամենեւին աչքին բան մը չէն երեւար, բաւական որ անոնցմով իր անյազ փառասիրութեան նպատակին կարող ըլլայ հասնիլ: Թող ամէն մարդ մտածէ իր վախճանին հասնելէն ետեւ հաստատուն մնալու համար ըրածները. անիրաւութիւն, բռնութիւն, հարստահարութիւն, ... ամէնն ալ ի գործ կը դնէ, թէ որ անոնցմով կրնայ ինքը զինքը բռնել: Ասով բոլոր հայրենեաց օգտին համար աշխատելու կարողութիւն ու կամք ունեցող մարդիկ մէկդի կը մնան, հայրենիքը անոնցմէ սպասած բարիքներէն կը զրկուի, ու դժնդակ եւ անտանելի լծոյ տակ կը հեծէ:

Հարկ չկայ աս աղէտալի նկարագիրը աւելի երկընցընել, ու մէկիկ մէկիկ ուրիշ մոլութիւններ ունեցող մարդիկներն ալ մէջ բերելով՝ ցուցընել որ անոնք ալ Հայրենասէր չէն կրնար ըլլալ, եւ միանգամայն նոյն մոլութիւններուն ալ հայրենեաց

պատճառած չարիքները ստորագրել : Մինչև և հիմա ըսածներնէս՝ ուրիշներն ալ դիւրաւ կրնան իմացուիլ :

Աս ըսածներնէս բացայայտ կը տեսնուի որ հայրենեաց ու ազգի մը ամենէն մեծ ու ամենէն վնասակար թշնամիները՝ մոլութիւններն են : Աս մոլութիւնները, հայրենեաց աս ներքին ու ընտանի թշնամիները՝ արտաքին թշնամիներէն այնչափ աւելի վնասակար ու զարհուրելի են, որչափ որ անոնցմէ աւելի ծածուկ են, ու միօրինակ ներքուստ պատերազմելով՝ օր ըստ օրէ զինքը կը ջլատեն, զօրութիւնը կը նուազցնեն ու վերջապէս վրան մահարեք հիւանդութիւն կը բերեն, որուն դարման տանեն ու բժշկելը՝ դրեթէ անկարելի կ'ըլլայ : Ասկից կը հետեւի ուրեմն որ ամէն Հայրենասէրները, ինչ աստիճանի մարդ կ'ուզեն նէ ըլլան, ան ամէն մէկ աստիճանին համեմատ մասնաւոր պարտքերէն զատ ընդհանուր պարտք մ'ունին, որն որ միանգամայն ամէն մէկուն գլխաւոր ու ամենէն մեծ պարտքն է, այս ինքն աս ներքին ու սաստիկ թշնամւոյն՝ մոլութեան՝ դէմ պատերազմիլ : Տեսնենք հիմա թէ աս պատերազմը կարգաւորեալ ըլլալու ու յաղթութեամբ պսակուելու համար՝ ինչ կերպով պէտք է որ ըլլայ :

Մոլութիւններուն դէմ պատերազմելու, մոլութիւնները ջնջելու, ազգ մը բարի ու առաքինի ընելու համար՝ ամենէն յարմար ու զօրաւոր միջոցն ան է որ ամէն մարդ սկսի իր անձնական մոլութիւններուն դէմ պատերազմիլ ու ինքը զինքը մոլութիւններէ պահելու ետեւէ իյնալ : Թէ որ ազգի մը ամէն մէկ անդամը՝ մոլութեան իր վրան տիրելու վտանգը տեսած ատեն՝ այնպէս դէմ դնելու ջանար, այնպէս առաքինութեան զէնքը ձեռքն առնէր, ինչպէս որ ամէն բարի քաղաքացի թշնամւոյն՝ քաղքին դուռը հասնելը լսած ատեն՝ զէնք կ'առնէ, թէ որ մոլութեան դէմ այնպէս զգուշութիւն ընէր, ինչպէս որ Հայրեն-

նասեր մը՝ հայրենիքը թշնամեաց ձեռքը մատնող ներքին թշնամեոյն դէմ զգուշութիւն կ'ընէ, ան առան մոլութիւնը ազգին մէջ մուտ չէր կրնար գտնել, նոյնպէս մտած մոլութիւնն ալ դիւրաւ կը ջնջուէր։ Ազգ մը առանձին անձինքներէ կը կազմուի. արդ թէ որ նոյն ազգը կազմող առանձին մարդիկները իրենք զիրենք մոլութիւններէ պահպանելու ջանային, մոլութիւններնին խլելու փոյթ ունենային, իրենք զիրենք ազգին առաքինի անդամ յարդարելու ետեւէ իյնային, քիչ ժամանակի մէջ բոլոր ազգը մոլութիւններէ ազատ ու առաքինի կ'ըլլար։

Աս է, ինչպէս ըսինք, ամէն Հայրենասէրներուն գլխաւոր ու առաջին ընդհանուր պարտքը։ Բայց որովհետեւ շատ դժուարին եւ գրեթէ անկարելի է որ ազգի մը մէջ ամէն մարդ աս գեղեցիկ ոգւով վառուած ըլլայ, աս սքանչելի Հայրենասիրութիւնն ունենայ, անոր համար ճշմարիտ Հայրենասէրներուն ասկից երկրորդ գլխաւոր ու ընդհանուր պարտականութիւն մ'ալ կը ծագի. այս ինքն թէ իրենց մոլութիւնները յաղթելու, հայրենեաց առաքինի անդամ ըլլալու ջանալէն ետեւ, նաեւ Հայրենակիցներնին ալ մոլութիւններէ ազատ պահելու ջանան։

Ազգ մը մոլութիւններէ զերծ կամ առաքինի ընելու համար՝ բնական ու ամենէն յարմար միջոցն աս է, այս ինքն որ նախ ամէն մարդ ջանայ որ ինք իր անձնական մոլութիւնները յաղթէ, եւ ետքը ուրիշները մոլութիւններնէն ազատելու ետեւէն իյնայ։ Աս կերպով վարուելով վախճանին հասնիլը որչափ որ դիւրին է նէ, այնչափ ալ դժուարին, մանաւանդ թէ կը համարձակիմ ըսելու՝ անկարելի է որ մէկը մոլութիւններու մէջ գտնուելով, նաեւ ետեւէ ալ իյնայ նէ՝ ուրիշները կարող ըլլայ ճամբու բերել։ Մոլութեան մէջ գտնուողը ուրիշները մոլութիւններէ ազատել ուզելը՝ անոր կը նմանի որ տգէտ մը ուրիշ-

ներուն գիտութիւն սորվեցընել ուզէ, կամ կոյր մը ուրիշ կոյրերուն առաջնորդ ըլլայ: Մէկ բարի օրինակ՝ հարիւր խրատէն աւելի օգուտ կ'ընէ, կ'ըսեն իմաստունք. եւ ասոր հակառակ մէկ շար օրինակ՝ հազար բարի խրատին ըրած ազդեցութիւնը կ'աւրէ, կ'ապականէ: Հայր մը, վարժապետ մը, երբ որ իր մոլութիւններուն վրայ աիրած է, բարի օրինակովը հաստատուած մէկ խօսքովը՝ անհամեմատ աւելի կ'ազդէ իր որդւոյն կամ աշակերտին բարքը շիտկելու, քան թէ մոլութեան մէջ գտնուողն իր հարիւր խօսքովը: Ինչպէս կրնայ բարկացող կամ կռուոտ մարդ մը՝ իրեն խնամոցը յանձնուածներուն հեղութիւն խրատել. ինչպէս կրնայ զիրենք համոզել որ բարկացողութիւնը, կռուասէր բնութիւնը մարդուս վնասակար ու ամօթալի բան է, եւ անոր համար աս մոլութիւններուն գէմ կռուելու է:

Ապա ուրեմն ուրիշներն առաքինի ընելու համար՝ հարկ է որ մարդ ամենէն յառաջ ինք առաքինի ըլլալու ետեւէ իյնայ: — Թէ որ մէկը աս կերպով վարուելով՝ իր հայրենեացը ունեցած գլխաւոր ընդհանուր պարտականութիւնը կատարելու ըլլայ, թէպէտ եւ կենացը մէջ հայրենեացը ամենեւին ուրիշ մէկ ծառայութիւն չընէ, ի վերայ այսր ամենայնի հայրենեաց շատ օգտակար եղած կ'ըլլայ. որովհետեւ ինչպէս վերի ըսածներնէս յայտնի կ'երեւայ, հայրենիքը ամենէն աւելի վտանգաւոր թշնամիներէն ազատած կ'ըլլայ: Իսկ թէ որ մէկը ասոր հակառակ բոլոր կեանքը հայրենեաց համար գործէ, հայրենակիցներուն յառաջադիմութեան համար աշխատի, եթէ որ ամէն բանէն յառաջ ինք առաքինի ըլլալու չըջանար, բոլոր իր Հայրենասիրութիւնն անօգուտ է, վնասակար է: Նախ մոլութիւններու տակ ինկած մարդու մը հայրենեաց համար ըրածները՝ փուճ ու անօգուտ են. ինչու որ բուն իր վախճանը ոչ երբեք կրնայ հայրեն-

նեաց օգուտը, ու զինքը շարժող պատճառը՝ ճշմարիտ Հայրենասիրութիւնն ըլլալ: Մարդուս սիրտը անձուկ է. այլևայլ մոլութիւններու որջ եղած սիրտը՝ աս գեղեցիկ հուրը չըկրնար իր մէջը բովանդակել. մոլութիւններն այնպէս բնութիւն մ'ունին՝ որ մարդուս սրտին ամէն ազնուական բերմունքները կը խղզեն, կ'ապականեն կամ անգործունեայ կ'ընեն: Ըսածներնուս աղէկ օրինակ մ'ունինք Հռոմայեցւոյ վրայ. որչափ ժամանակ որ իրենց բնական առաքինութիւնները պահեցին, Հայրենասէր էին, եւ Հայրենասիրութիւննին՝ հայրենեաց համար իրենց մեծամեծ գործքեր գործել կու տար, որով գրեթէ բոլոր աշխարհքիս ալ տիրեցին: Բայց երբ որ աս առաքինութիւններնին կորսընցուցին, երբ որ մոլութիւններու գերի եղան, արդարութեան տեղ՝ անիրաւութիւն, բարեխառնութեան տեղ՝ անկարգութիւն, արիւութեան տեղ՝ թուլութիւն... մտաւ, նոյն ատեն Հայրենասիրութեան տեղ ալ՝ անձնասիրութիւն եկաւ, տէրութիւննին կորսընցուցին ու չարաչար կործանեցան:

Ար յուսանք որ աս բսածներնուս վրայ ամենեւին մէկը չըտարակուսիր. բայց գուցէ ոմանց չափազանց բան մը երեւցած ըլլայ վերջի բսածնիս թէ Հայրենասիրութիւնը առաքինութեան հետ կապակցուած չըլլայ նէ՝ վիասակար է: Ասոր վրայ ալ համառօտիւ մը խօսելով բոլոր խօսակցութիւննիս կը լմընցընենք՝ — Ամէն առաքինութիւն իր թշնամիներնունի, որոնք ամէն կերպով անիկա վար զարնելու, յարգը ուրիշներուն առջեւը նուազեցընելու կը ջանան, որպէս զի ասանկով իրենց՝ նոյն առաքինութիւնը չունենալնուն ամօթը վրաներնէն վերցընեն: Բայց որովհետեւ առաքինութիւնը ըստ ինքեան այնպէս գեղեցիկ, այնպէս սիրելի բան մըն է, որ նոյն իսկ չունեցողներն ալ, բաւական որ վերջին առաքինի չարութեան հասած չըլլան, կը յարգեն, անոր համար իր

Թշնամիները ուղղակի իրեն դէմ խօսիլ չկրնալով՝ շատ անգամ անոր չարաչար գործածութիւնը կամ անոր կեղծիքը ձեռքերնին գործիք կ'առնեն, եւ անով առաքինութիւնը տգէտներուն առջեւն ատելի ընելու կը ջանան: Նոյնը կը պատահի Հայրենասիրութեան ալ: Դժբախտութեամբ ամէն ազգի մէջ ու ամէն ատեն այնպիսի մարդիկ կը գտնուին, որոնք աս դեղեցիկ առաքինութենէն զուրկ գտնուելով՝ ունեցողները ուրիշներուն աչքէն հանել կ'ուզեն: Բայց ինչպէս ընեն: Չեն կրնար Հայրենասիրութիւնը համարձակ վար զարնել, բտել թէ Հայրենասիրութիւնը անօգուտ, վնասակար բան մըն է. ուստի եւ Հայրենասիրութեան չարաչար գործածութեան, անոր կեղծիքէն ծագած վիասներուն կը դիմեն, եւ անով նոյն իսկ Հայրենասիրութիւնն ատելի ընելու կը ջանան, ու շատ անգամ վախճաններնուն կը հասնին: որով եւ Հայրենիքը մեծապէս վնաս կը կրէ:

Բայց որոնք են Հայրենասիրութիւնը չարաչար գործածողները, որոնք են Հայրենասիրութեան կեղծիքն ունեցողները: Անոնք որոնք որ մոլութիւններով լեցուն են, ու աս իրենց մոլութիւնները ծածկելու, մտքերնին դրած զանազան վախճաններնուն հասնելու համար՝ Հայրենասիրութիւնը իրենց գործիք կ'ընեն: Անոնք որոնք որ իրենց անձնասիրութիւնն ու պատուասիրութիւնը՝ Հայրենասիրութեան պատրուակին տակ ծածկելով՝ իրենց անուն ստանալու, մեծ պատուոյ, աստիճանի ու հարստութեան հասնելու համար բրած ջանքերնին՝ իբրեւ Հայրենեաց օգտին համար եղած գործքեր կ'ուզեն ցուցնել: Անոնք որոնք որ թէպէտ աս աստիճանի չարութեան հասած չեն, ու սրտերնուն մէջ Հայրենեաց սէր կայ, բայց մոլութիւններնուն վրայ աղէկ տիրած չըլլալով, քրիստոնէական սէրը՝ աս Հայրենասիրութեան հետ միացուցած չըլլալով, Հայրենասիրու-

Թիւններնուն մէջ կրօնքէն չառաջնորդուելով՝ շատ անգամ չափը կ'անցընեն, եւ իբրեւ Թէ ամէն բան Հայրենասիրութեան ներուած կը կարծեն, որով ուրիշներուն առիթ կու տան որ ըրած չարիքներնուն ու անկարգութիւններնուն նկատձառը՝ Հայրենասիրութիւնը սեպեն: Ասով պատճառ կ'ըլլան որ նոյն իսկ Հայրենասիրութիւնը կը զրպարտուի ու տգիտներուն առջեւ կը նախատուի. ասով շատ անգամ ճշմարիտ հայրենասիրական գործքերը չարաչար կը մեկնուին, նոյն իսկ Հայրենասէրներն ալ սմանց առջեւ պատիւնին կը կորսուցընեն, կամ գոնէ ընելու բարիքնին բառ մեծի մասին կը խափանուի. ասով շատերը Հայրենասիրութենէն ետ կը կենան, ու տգիտութեամբ Հայրենասիրութեան թշնամիներուն կողմը կ'անցնին ու անոնց գործակից կ'ըլլան: Արդ յայտնի է որ աս կերպով առաքինութենէ զուրկ եղող կամ աւելի ծիշդ խօսելու համար՝ շինծու կամ գոնէ կիսկատար Հայրենասիրութիւնը անօգուտ ըլլալէն զատ՝ անուղղակի մնասակար ալ կ'ըլլայ:

Բայց Թէ որ խօսքերնուս դեռ կատարեալ չհաւանող մէկը կայ նէ, թող մէյ մը աչուրները Եւրոպայի հիմակուան վիճակին դարձնէ: — Ինչ ազէտալի տեսարան: Ամէն կողմէն ուրախութեան ձայները դադրած ու անոնց տեղ ողբոց ու հառաչանաց ձայներ կը լսուին: Շատ տեղ համալսարաններն ու դպրոցները գոցուած, արուեստներն ու գիտութիւնները երեսի վրայ ձգուած, առուտուրն ու վաճառականութիւնը գրեթէ դադրեր են: Յառաջագոյն հանգարտ ու խաղաղ եղող քաղաքներու մէջ հիմա ամէն բարի քաղաքացին իր ընչիցը, իր կենացը, իր պատուոյն վրայ ըսպէ մը ապահովութիւն չունի, ու միշտ ահի դողի մէջ կը կենայ: Իրենց ժողովուրդները զաւկի պէս սիրող ու բոլոր կեանքերնին անոնց երջանկութեան նուիրող իշխանները՝ մայրա-

քաղաքներնէն, ուր որ երբեմն հօր պէս պատիւ ու յարգութիւն կ'ընդունէին, փախչելու կը ստիպուին: Հայրենեաց ճշմարիտ պայծառութեան բաղձացող ու բոլոր ճգամբ հայրենակիցներնուն օգտին համար աշխատող երեւելի անձինք՝ նենգաւոր ու կատաղի մարդիկներու ձեռքով կը սպաննուին: Փողոցներու ու հրապարակներու մէջ իրենց գործքին զբաղած կամ զբօսող հանդարտ քաղաքացիներու տեղ՝ դունդագունդ զինաւորեալ մարդիկ կը տեսնուին: Վաստակասէր երկրագործը իր քրտանց բերքերուն վրայ ուրախանալու տեղ՝ զաւկրները քովը ժողված՝ արտասուօք կը հառաչէ. արուեստաւորը իր ամայի խանութին մէջ անգործ նստած՝ իրիկունը ձեռուըները պարապ տուն դարձած ատեն անօթի կնոջն ու որդիքներուն ունենալու ցաւոյն վրայ կը մտածէ: Մէկ կողմը հարս մը իր նորածին զաւակը զիրկն առած՝ յուսահատութեամբ՝ մեռնող այրը կու լայ. մէկալ կողմը տարիքն առած մայր մը իր ծերութեան նեցուկն եղող որդւոյն մահը կը կոծի:...


Այրք որ մարդ աս ամէն շարիքները տեսնելու ըլլայ, կը սկսի պատճառները փնտռել, եւ հարցընել թէ արդեօք բարբարոսներու գնդեր կ'արշաւեն, արդեօք նոր Ատտիլա կամ երկրորդ Թիմուր մ'ելած է: ... Եւ ինչչափ կը զարմանայ երբ որ կ'իմանայ թէ ասանկ բան չկայ, եւ աս շփոթութիւններուն ու շարիքներուն մեծ պատճառը կամ գոնէ զլիսաւոր գործիք ըլլողը՝ ան շինծու կամ առաքիսութենէ զուրկ եղող Հայրենասիրութիւնն է: Բայց թէպէտ զարմանայ, թէպէտ երկայն ժամանակ հաւատալ չուզէ, ի վերայ այսր ամենայնի աղէկ մը քննելով՝ պետք է որ խոստովանի թէ այնպէս է: Պէտք է որ յայտնի տեսնէ թէ քանի մը փառասէր կամ անձնասէր մարդիկ՝ իրենց վախճանին հասնելու կամ աս մարդութիւններնին յազեցընելու համար՝ Հայրենասիրու-

Թիւն կեղծաւորելով՝ ելած ու հետերնին ուրիշ իրենց նման չար ու ազահ մարդիկներ առած, (որոնք թէպէտ սրտերնուն մէջ Հայրենասիրութեան եւ ոչ կայծ մ'ունին, վասն զի գուցէ եւ ոչ ալ հայրենիք ունին, բայց Հայրենիք, Հայրենասիրութիւն բառը անդադար բերաննին կը պարտոցընեն, միշտ խօսքերնին աս է թէ Հայրենիքը, Հայրենեաց ազատութիւնը վտանգի մէջ է, եւ բոլոր բաժնին Հայրենասիրութենէն ծագած գործքերու պէս կը ցուցընեն,) անոնց ձեռքովը շատ միամիտ ու անմեղ մարդիկ խաբելով՝ իրենց կողմը կը ձգեն, եւ ամէնքը մէկտեղ նոյն շարիքները կը գործեն կամ անոնց պատճառ կ'ըլլան: Եւ թէպէտ աս վերջին միամիտ մարդիկներէն սմանք եւ գուցէ շատերը սրտանց հայրենիքներնուն բարիքը կ'ուզեն, բայց աս իրենց Հայրենասիրութիւնն առաքինութեամբ միացեալ չըլլալով, եւ անոր համար ալ բանեցուցած միջոցներնուն անիրաւութեան ու վնասակարութեան միտ չլինելով՝ առանց խղճի քանի մը շարերուն գործիք կ'ըլլան, անոնց կ'օգնեն ու հայրենիքներնուն գլուխը ան մեծամեծ շարիքները կը բերեն: — Աս ամէն բան տեսնելով՝ ո՞վ կրնայ ալ աս շինծու ու անկատար Հայրենասիրութեան վնասակարութիւնն ուրանալ:

Աստուած չընէ որ Ազգերնուս մէջ այսպիսի պակասաւոր ու շինծու եւ վնասակար Հայրենասիրութիւն ենթադրենք: Մանաւանդ թէ կը յուսանք ու հաստատուն զիտենք թէ քանի որ ան շատ դարերէ յառաջ գոյութեամբ յիշատակուած ու Ազգին մեծերը նախանձելի ընող տիրասիրութիւնն ու միաբանութիւնը * Ազգերնուս Հայրենասերնե-

* «Երանի՛ որ Հայոց գնդին տէր իցէ, այնպիսի տիրասէր եւ միաբան... զօրացն»։ Աս խօսքս ըսաւ Շապուհ Պարսից թագաւորը, Հայոց՝ իրենց Արշակ թագաւորին վրայ ունեցած սէրն ու գուլթը տեսնելով։ Բուզ. Ե. Դպր. Ե. ԳԼ. 202:

րուն սրտին մէջ հաստատուն կը մնայ, քանի որ Ազգերնու իբրեւ բնածին եղած կրօնասիրութիւնն ու բարեպաշտութիւնը անջինջ կը կենայ, այսպիսի հրէշ մը չկրնար մուտ գտնել: Բայց որովհետեւ հիմակուան շինծու ու մլնասակար Հայրենասէրները ամէն կերպով իրենց չարամտութիւնը ծածկելու կը ջանան, անոր համար մեզի պարտք սեպեցինք այսպիսի խարէութենէն զգուշացնել: Որպէս զի ան նախանձելի Հայրենասիրութիւնը՝ որն որ հիմակուան ասէն Ազգերնու մէջ աւելի եւս տարածուելու սկսած է, չէ թէ միայն միշտ մաքուր ու անխառն մնայ, հապա աւելի եւս մաքրուի, լուսաւորուի, կարգաւորուի ու գործունեայ ըլլայ: Որով ճշմարիտ Հայրենասէրներուն թիւն երթալով աւելնայ, իրենց ճիգն ու աշխատութիւնը, եւ Ազգին օգտին համար բրածնին՝ աւելի եւս պողաբեր ըլլայ, ու երբէք ան շինծու եւ մլնասակար Հայրենասիրութիւնը չկրնայ մուտ գտնել: — Աս է խօսքերնու նպատակը, աս է սրտերնու բողձանքը, եւ աս է միանգամայն հաստատուն ակնկալութիւննիս:



Handwritten text on a green strip, possibly a date or reference number.

11/11 - 41 11

